ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ... ԳԵՏԱՇԷՆՈՒՄ

ՄԻՔԱՅԷԼ ՀԱՍՊԵԱՆ

Ըստ Բաքուի ռադիոյի օրերս հաղորդած տեղեկութեան, Գետաշէն եւ Մարտունաշէն նախկին հայաբնակ գիւղերում ստեղծուել է կազմկոմիտէ, որը կոչուած է վերականգնելու խորհրդային իշխանութեան տեղական մարմինները: Իհարկէ, ադրբեջանական ռադիոն իր այդ հաղորդման մէջ ոչինչ չի ասում, թէ որքան հակախորհրդային էին այդ գիւղերի նախկին խորհրդային մարմինները: Միայն ափսոսանք է յայտնւում, որ այդ գիւղերի նոր տէրերը՝ նախկինում հայաստանաբնակ թուրք-ազերիները, ստիպուած պիտի լինեն բաւականին ջանքեր թափել, մինչեւ որ կարգի կը բերեն իբր թէ հայ գրոհայինների ծայրաստիճան քայքայած տնտեսութիւնը, փլատակների վերածած շինութիւնները: Իսկ հաշուարկները ցոյց են տալիս, նշւում է հաղորդման մէջ, որ այդ գիւղերի նախկին բնակիչները, հեռանալուց առաջ, անգթօրէն աւերել են շուրջ 180 բնակելի տուն, գիւղական հիւանդանոցը, երկու խանութ, կապի բաժանմունքը, աւտոմատ հեռախօսակայանը, այլ օբիեկտներ: Եւ միայն խորհրդային զօրքերի ու ադրբեջանական ՕՄՕՆի -եռանդուն, հայրենանուէր- ջանքերի շնորհիւ է, որ երկու գիւղերում, միասին վերցրած, փրկուել, կանգուն է մնացել հազիւ հազար տուն: Դրանցում արդէն վերաբնակուել է 380 ընտանիք: Ի դէպ, նրանց թոյլ են տուել գիղերը մտնել միայն այն բանից յետոյ, երբ բանակային սակրաւորները ստուգել, ականազերծել են տեղանքը: Հիմայ օրական 50-60 ընտանիք է տեղափոխւում այդտեղ, կը հերիքե՞ն, արդեօք, կանգուն մնացած տները, մտահոգ հարցնում է հաղորդավարը: -Փառք ալլահին, -շտապում է աւելացնել նա, -հանրապետութեան եւ Խանլարի շրջանի համապատասխան կազմակերպութիւնները ոչինչ չեն խնայում վերաբնակիչների կեանքը տանելի դարձնելու համար: Արդէն նշանակուել է նոր խորհտնտեսութեան տնօրէնը՝ Իսրաֆիլ Մամեդովը, որը ժամանակին կոլտնտեսութեան նախագահ է աշխատել Հայաստանում: Նա արդէն ընտրում, նշանակում է բրիգադավարներին, միւս մասնագէտներին: Իսկ այժմ ահա ձեռնամուխ են եղել գիւղխորհրդի վերականգնմանը:

Եւ կամայ թէ ակամայ հետեւելով -խորհրդային իշխանութիւն- կոչուածի այդ կամայական գընալ-գալուն, մարդ տարակուսանքով է համակւում. այս ի՞նչ արտառոց վարք է. անկոչ հիւրի պէս գնում է այնտեղ, ուր իր կարիքը չունեն, չի գալիս այնտեղ, ուր գուցէ պէտք գայ թէկուզ ժամանակաւորապէս, 17ի Հոկտեմբերին ոչ ոք հիւր չկանչեց, բայց ինքնակոչ տիրոջ պէս եկաւ Ռուսաստան ու երկրի ղեկը ձեռքը վերցրեց, 20ի Նոյեմբերին ոչ ոք չխնդրեց բարեհաճել այստեղ՝ Երեւան, բայց ինքնագլուխ եկաւ ու բազմեց սեղանի գլխին: Իսկ ահա Արցախի հայերը ինչքան ժամանակ է, հիւր չէ, ուղղակի տանտիրութեան են կանչում, բայց կամակոր յամառում ու չի գալիս: Փոխարէնը գնացել, հաստատուել է աւերակուած Գետաշէնում: Բայց հարց է ծագում. իսկ եթէ սակրաւորները, եթէ իրօք նրանց կարիքը կար, արդե՞ք բոլոր ականներն են վնասազերծել, կամ էլ թէ, ի՞նչ է, արցախցի հայերը խորհրդային իշխանութեան մարմիններին ուղղուած իրենց բողոք-նամակները եւ կամ հրաւիրատոմսերը այսուհետեւ Չայքէ՞նդ պիտի առաքեն: Չէ, աստուած վկայ, ըստ երեւոյթին այս եղած-չեղած խորհրդային իշխանութեան կամ աղն է պակաս, կամ էլ թէ՝ մաղը: Ժողովուրդն ինքն է ասում՝ դեռ 17 թուից: